

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

2009 թվականի հունիսի 9-ի

ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԱՐՏԱՔԻՆ ԱՌԵՎՏՐԻ ՈԼՈՐՏՈՒՄ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

(Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի հունիսի 6-ի թիվ 680 որոշման խմբագրությամբ, Մաքսային միության հանձնաժողովի 2010 թվականի հունվարի 27-ի թիվ 168 որոշմամբ կատարված փոփոխություններով)

Բելառուսի Հանրապետության Կառավարությունը, Ղազախստանի Հանրապետության Կառավարությունը եւ Ռուսաստանի Դաշնության Կառավարությունը, այսուհետ՝ Կողմեր, նպատակ ունենալով իրականացնելու «Երրորդ երկրների նկատմամբ ոչ սակագնային կարգավորման միջոցների մասին» 2008 թվականի հունվարի 25-ի համաձայնագիրը, հաշվի առնելով երրորդ երկրների նկատմամբ միասնական առետրային ռեժիմ սահմանելու Կողմերի մտադրությունները, համաձայնեցին հետեւյալի մասին.

Հոդված 1

Գործողության ոլորտը

Սույն Համաձայնագրով սահմանվում է միասնական ցանկում ընդգրկված այն ապրանքների արտահանման եւ (կամ) ներմուծման լիցենզիաների ու թույլտվությունների տրամադրման կարգը, որոնց նկատմամբ երրորդ երկրների հետ Եվրասիական տնտեսական ընկերակցության շրջանակներում առետուր իրականացնելիս կիրառվում են Մաքսային միության մասնակից պետությունների կողմից ներմուծման կամ արտահանման արգելքներ կամ սահմանափակումներ (այսուհետ՝ միասնական ցանկ):

Սույն Համաձայնագրի գործողությունը չի տարածվում արտահանման վերահսկողությանը ենթակա ապրանքների արտահանման եւ (կամ) ներմուծման,

սպառազինության կամ ռազմական տեխնիկայի արտահանման ու ներմուծման, ինչպես նաև ռազմական նշանակության այլ արտադրանքի վրա:

Հոդված 2

Հիմնական հասկացությունները

Սույն Համաձայնագրում օգտագործվում են «Երրորդ երկրների նկատմամբ կիրառվող ոչ սակագնային կարգավորման միասնական միջոցների մասին» 2008 թվականի հունվարի 25-ի համաձայնագրի 1-ին հոդվածով սահմանված հասկացությունները, ինչպես նաև հետևյալ հասկացությունները.

«գլխավոր լիցենզիա»՝ Կողմի որոշման հիման վրա արտաքին առևտրային գործունեության մասնակցին տրվող եւ լիցենզիայով սահմանված քանակությամբ լիցենզավորման ենթակա ապրանքի առանձին տեսակի արտահանման եւ (կամ) ներմուծման իրավունք տվող լիցենզիա,

«բացառիկ լիցենզիա»՝ արտաքին առևտրային գործունեության մասնակցին ապրանքի առանձին տեսակի արտահանման եւ (կամ) ներմուծման բացառիկ իրավունք տվող լիցենզիա,

«միանգամյա լիցենզիա»՝ արտաքին առևտրային գործունեության մասնակցին տվյալ ապրանքի որոշակի քանակության արտահանման եւ (կամ) ներմուծման իրավունք տվող լիցենզիա՝ արտաքին առևտրային այնպիսի գործարքի հիման վրա, որի առարկան լիցենզավորման ենթակա ապրանքն է,

«թույլտվություն»՝ արտաքին առևտրային գործունեության մասնակցին տրվող թույլատրող փաստաթուղթ՝ արտաքին առևտրային այնպիսի գործարքի հիման վրա, որի առարկան այն ապրանքն է, որի նկատմամբ սահմանված է հսկողություն՝ դրա որոշակի քանակությամբ արտահանելու եւ (կամ) ներմուծելու համար,

«հայտատու»՝ արտաքին առևտրային գործունեության մասնակից, որը Կողմ հանդիսացող պետության գործադիր իշխանության պետական լիազոր մարմին է ներկայացնում փաստաթղթեր՝ լիցենզիայի կամ թույլտվության ձեւակերպման նպատակով,

«լիցենզիայի կատարում»՝ Կողմ հանդիսացող պետությունների մաքսային տարածքներ

ապրանքների փաստացի ներմուծում երրորդ երկրներից կամ Կողմ հանդիսացող պետությունների մաքսային տարածքներից ապրանքների արտահանում դեպի երրորդ երկրներ, որոնց համար, տրված լիցենզիայի հիման վրա, մաքսային ձեւակերպում է կատարվել:

Հոդված 3

Լիցենզիաների տրամադրման պայմանները եւ կարգը

1. Կողմ հանդիսացող պետությունների գործադիր իշխանության պետական լիազոր մարմինների (այսուհետ՝ լիազոր մարմինների) կողմից տրամադրվում են լիցենզիայի հետեւյալ տեսակները՝

- միանգամյա,
- գլխավոր,
- բացառիկ:

Լիազոր մարմնի կողմից գլխավոր եւ բացառիկ լիցենզիաների տրամադրումն իրականացվում է Մաքսային միության հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) որոշմամբ նախատեսված դեպքերում:

2. Միանգամյա լիցենզիայի գործողության ժամկետը չի կարող գերազանցել մեկ տարի ժամկետը՝ դրա գործողության մեջ մտնելու ամսաթվից սկսած: Միանգամյա լիցենզիայի գործողության ժամկետը կարող է սահմանափակվել արտաքին առևտրային պայմանագրի գործողության ժամկետով կամ լիցենզիայի տրամադրման համար հիմք հանդիսացող փաստաթղթի գործողության ժամկետով:

Լիցենզիայի գործողության ժամկետն այն ապրանքների դեպքում, որոնց համար սահմանվել են քանակական սահմանափակումներ, ավարտվում է այն օրացուցային տարում, որի համար սահմանվել է քվոտան:

Գլխավոր լիցենզիայի գործողության ժամկետը չի կարող գերազանցել դրա գործողությունն ուժի մեջ մտնելու ամսաթվից սկսած՝ մեկ տարի ժամկետը, իսկ այն ապրանքների դեպքում, որոնց համար սահմանվել են քանակական սահմանափակումներ,

այն ավարտվում է այն օրացուցային տարում, որի համար սահմանվել է քվտան, եթե Հանձնաժողովի որոշմամբ այլ բան նախատեսված չէ:

Բացառիկ լիցենզիայի գործողության ժամկետը սահմանվում է Հանձնաժողովի որոշմամբ՝ յուրաքանչյուր առանձին դեպքի համար:

3. Լիցենզիայի ձեւակերպման համար հայտատուի կողմից լիազոր մարմին են ներկայացվում հետեւյալ փաստաթղթերը.

լիցենզիա ստանալու մասին հայտը, որը լրացված է ձեւակերպված է ապրանքների առանձին տեսակների արտահանման եւ (կամ) ներմուծման համար լիցենզիա ստանալու մասին հայտի ձեւակերպման եւ նման լիցենզիայի ձեւակերպման համար սահմանված հրահանգներին համապատասխան (այսուհետ՝ դիմում)՝ 1-ին հավելվածի համաձայն,

Հանձնաժողովի կողմից մշակված եւ արտաքին առետրի մասնակիցներին անհատույց հիմունքներով փոխանցվող, ծրագրային ապահովման միջոցով ստեղծված՝ դիմումի էլեկտրոնային օրինակը Հանձնաժողովի կողմից հաստատված ձեւաչափով: Արտաքին առետրի մասնակիցը կարող է օգտագործել իր սեփական ծրագրային ապահովումը, որի միջոցով կազմում է դիմումի էլեկտրոնային օրինակը՝ խստորեն պահպանելով Հանձնաժողովի կողմից հաստատված ձեւաչափը,

արտաքին առետրային պայմանագրի (պայմանագրի) օրինակը, դրա հավելվածները եւ (կամ) դրանցում կատարված լրացումները (միանգամյա լիցենզիայի համար), իսկ արտաքին առետրային պայմանագրի բացակայության դեպքում՝ Կողմերի մտադրությունները հավաստող այլ փաստաթղթի օրինակը,

հարկային մարմնում հաշվառվելու մասին փաստաթղթի օրինակը,

լիցենզավորման ենթակա գործունեության տեսակի իրականացման համար տրված լիցենզիայի օրինակը, եթե գործունեության նման տեսակը կապված է այն ապրանքի շրջանառության հետ, որի նկատմամբ միասնական մաքսային տարածքում սահմանվել է լիցենզավորման պահանջ,

այլ փաստաթղթեր, եթե դրանք սահմանվել են Հանձնաժողովի որոշմամբ, որի հիման վրա սահմանվել է տվյալ ապրանքի լիցենզավորման պահանջը:

Ներկայացված փաստաթղթերի օրինակների յուրաքանչյուր թերթ պետք է վավերացված լինի հայտատուի ստորագրությամբ եւ կնիքով, կամ փաստաթղթերի

օրինակները պետք է կարված ու վավերացված լինեն հայտատուի ստորագրությամբ եւ կնիքով:

Հայտատուի կողմից ներկայացված փաստաթղթերը պետք է գրանցվեն լիազոր մարմնում:

Լիցենզիան տրամադրվում է՝ լիցենզիայի տրամադրման համար Կողմ հանդիսացող պետության օրենսդրությամբ նախատեսված կարգով եւ չափով գանձվող պետական տուրքի (լիցենզավորման վճարի) վճարումը հավաստող փաստաթուղթը՝ հայտատուի կողմից ներկայացնելուց հետո:

4. Հանձնաժողովի որոշմամբ նախատեսված դեպքերում, նախքան հայտատուի կողմից հայտը լիազոր մարմին ներկայացնելը, այն ուղարկվում է Հանձնաժողովի որոշման հիման վրա Կողմի կողմից ստեղծված՝ Կողմ հանդիսացող պետության գործադիր իշխանության համապատասխան մարմին՝ համաձայնեցման նպատակով:

5. Լիցենզիան տրամադրվում է կամ լիցենզիայի տրամադրումը մերժվում է լիազոր մարմնի կողմից, սույն հոդվածի 3-րդ կետով նախատեսված փաստաթղթերի հիման վրա՝ փաստաթղթերը ներկայացնելու օրվանից՝ 15 աշխատանքային օրվա ընթացքում:

6. Լիցենզիայի տրամադրումը մերժվում է հետեւյալ հիմքերով.

թերի կամ անարժանահավատ տեղեկությունների առկայությունը՝ լիցենզիա ստանալու համար հայտատուի կողմից ներկայացվող փաստաթղթերում,

անհամապատասխանությունը սույն Համաձայնագրի 3-րդ եւ 5-րդ հոդվածներով նախատեսված պահանջներին,

լիցենզիայի տրամադրման համար հիմք ծառայող մեկ կամ մի քանի փաստաթղթերի գործողության դադարեցումը կամ կասեցումը,

Կողմ հանդիսացող պետությունների միջազգային պարտավորությունների խախտումը, որը կարող է տեղի ունենալ այն պայմանագրի կատարման արդյունքում, որի իրականացման համար հայցվում է լիցենզիան,

քվոտայի սպառումը (քվոտայի պահանջով սահմանափակման ենթակա ապրանքների համար լիցենզիայի ձեւակերպման դեպքում):

Լիցենզիայի տրամադրումը մերժելու մասին որոշումը պետք է հիմնավորված լինի եւ գրավոր ներկայացվի հայտատուին:

7. Լիազոր մարմինը ձեակերպում է լիցենզիայի բնօրինակը, որը տրամադրվում է հայտատուին: Նախքան ապրանքների մաքսային ձեակերպումը՝ հայտատուն լիցենզիայի բնօրինակը ներկայացնում է համապատասխան մաքսային մարմին, որը, լիցենզիան հսկողության տակ վերցնելով, հայտատուին է տալիս դրա օրինակը՝ այն հսկողության տակ վերցնելու մասին մաքսային մարմնի կողմից կատարված նշումով:

Լիցենզիայի բացակայությունը Կողմ հանդիսացող պետությունների մաքսային մարմինների կողմից ապրանքների մաքսային ձեակերպումը մերժելու համար հիմք է ծառայում:

8. Տրամադրված լիցենզիաների մեջ փոփոխությունների կատարումը չի թույլատրվում, այդ թվում՝ տեխնիկական բնույթի պատճառներով:

9. Այն դեպքում, երբ որպես իրավաբանական անձ գրանցված հայտատուի հիմնադիր փաստաթղթերում կատարվել են փոփոխություններ (կազմակերպարավական ձեւի, անվանման կամ գտնվելու վայրի փոփոխում) կամ փոխվել են ֆիզիկական անձ հանդիսացող հայտատուի անձնագրային տվյալները, հայտատուն պարտավոր է դիմել տրամադրված լիցենզիայի գործողությունը դադարեցնելու եւ նոր լիցենզիա ձեակերպելու խնդրանքով՝ կից ներկայացնելով հայտը եւ նշված փոփոխությունները հավաստող փաստաթղթերը:

10. Լիազոր մարմինն իրավունք ունի լիցենզիայի գործողությունը դադարեցնելու կամ կասեցնելու մասին որոշում կայացնելու.

հայտատուի կողմից գրավոր դիմում ներկայացնելու դեպքում,

որպես իրավաբանական անձ գրանցված հայտատուի հիմնադիր փաստաթղթերում փոփոխություններ կատարելու (կազմակերպարավական ձեւի, անվանման կամ գտնվելու վայրի փոփոխում) կամ ֆիզիկական անձ հանդիսացող հայտատուի անձնագրային տվյալների փոփոխման դեպքում,

լիցենզիա ստանալու նպատակով հայտատուի կողմից ներկայացված փաստաթղթերում անարժանահավատ տեղեկություններ հայտնաբերելու դեպքում,

լիցենզիայի տրամադրման համար հիմք ծառայող մեկ կամ մի քանի փաստաթղթերի գործողության դադարեցումը կամ կասեցումը,

այն մեկ կամ մի քանի փաստաթղթերի գործողության դադարեցման կամ կասեցման

դեպքում, որոնց հիման վրա տրամադրվել է լիցենզիան,

լիցենզավորման ենթակա գործունեության տեսակի իրականացման համար տրված լիցենզիայի չեղարկման դեպքում, եթե գործունեության նման տեսակը կապված է այն ապրանքի շրջանառության հետ, որի համար սահմանվել է լիցենզավորման պահանջ,

լիցենզիայի տրամադրման ժամանակ թույլ տրված այնպիսի խախտումների հայտնաբերման դեպքում, որոնց հետեւանքով տրամադրվել է լիցենզիան, որը չէր կարող տրամադրվել սահմանված կարգին համապատասխան գործելու դեպքում,

լիցենզառուի կողմից միջազգային նորմատիվ իրավական ակտերով կամ Կողմ հանդիսացող պետությունների նորմատիվ իրավական ակտերով սահմանված՝ լիցենզիայի տրամադրման պայմանները չկատարելու դեպքում,

լիցենզառուի կողմից սույն հոդվածի 12-րդ կետը չկատարելու դեպքում:

Լիցենզիայի գործողությունը կասեցվում է դրա մասին լիազոր մարմնի կողմից որոշում կայացնելու ամսաթվից:

Կասեցված լիցենզիայի գործողությունը կարող է լիազոր մարմնի կողմից վերականգնվել դրա գործողության կասեցմանը հանգեցնող պատճառները վերացնելուց հետո: Ընդ որում, լիցենզիայի գործողության կասեցումը դրա երկարաձգման համար հիմք չէ:

Լիցենզիայի գործողության կասեցման կամ դադարեցման կարգը սահմանվում է Հանձնաժողովի կողմից:

11. Լիցենզիայի կորստի դեպքում լիազոր մարմինը, հայտատուի գրավոր դիմումի հիման վրա, եւ Կողմ հանդիսացող պետության օրենսդրությամբ նախատեսված կարգով ու չափով պետական տուրքը (լիցենզավորման վճարը) վճարելուց հետո, տրամադրում է բնօրինակի նման ձեւակերպվող եւ «Կրկնօրինակ» նշագրում պարունակող լիցենզիայի կրկնօրինակը:

Դիմումը, որով պարզաբանվում են լիցենզիայի կորստի պատճառները եւ հանգամանքները, կազմվում է կամայական ձեւով:

Լիցենզիայի կրկնօրինակը լիազոր մարմնի կողմից տրամադրվում է դիմումը ներկայացնելու օրվանից՝ հինգ աշխատանքային օրերի ընթացքում:

12. Գլխավոր եւ բացառիկ լիցենզիա ունեցողները պարտավոր են եռամսյակային

կտրվածքով, մինչև հաշվետու եռամսյակին հաջորդող յուրաքանչյուր ամսվա 15-ը, լիազոր մարմին ներկայացնել հաշվետվություն լիցենզիայի կատարման ընթացքի վերաբերյալ:

Միանգամյա լիցենզիա ունեցողները պարտավոր են, լիցենզիայի գործողության ժամկետը լրանալուց հետո 15 օրվա ընթացքում, լիցենզիայի կատարման մասին լիազոր մարմին տեղեկանք ներկայացնել:

13. Լիցենզիան հսկողությունից հանելու դեպքում Կողմ հանդիսացող պետության համապատասխան լիազոր մարմինը, 5 աշխատանքային օրերի ընթացքում, հայտատուին՝ նրա գրավոր դիմումի հիման վրա, լիցենզիայի կատարման մասին տեղեկանք է տալիս:

Տեղեկանքի տրամադրման ձեւը եւ կարգը սահմանվում է Հանձնաժողովի կողմից:

Հոդված 4

Թույլտվությունների տրամադրման պայմանները եւ կարգը

1. Թույլտվություններն առանց սահմանափակման տրամադրվում են բոլոր հայտատուներին:

2. Թույլտվության նախագծի եւ թույլտվության ձեւակերպումը կատարվում է ապրանքների առանձին տեսակների արտահանման եւ (կամ) ներմուծման թույլտվության ձեւակերպման ու հավելված թիվ 2-ի համաձայն՝ նման թույլտվության ձեւակերպման համար սահմանված հրահանգներին համապատասխան:

3. Թույլտվությունն ստանալու համար հայտատուն լիազոր մարմին է ներկայացնում թույլտվության նախագիծը թղթային կրիչի վրա՝ 1 օրինակից եւ թույլտվության նախագծի էլեկտրոնային օրինակը Հանձնաժողովի կողմից հաստատված ձեւաչափով, որն ստեղծվում է Հանձնաժողովի կողմից մշակված ծրագրային ապահովման միջոցով եւ անհատուց հիմունքներով փոխանցվում է արտաքին տնտեսական գործունեության մասնակիցներին: Արտաքին առևտրի մասնակիցը կարող է օգտագործել իր սեփական ծրագրային ապահովումը, որի միջոցով կազմում է թույլտվության նախագծի էլեկտրոնային օրինակը՝ խստորեն պահպանելով Հանձնաժողովի կողմից հաստատված ձեւաչափը,

Թույլտվությունն ստանալու համար հայտատուին չի թույլատրվում ներկայացնել թույլտվության նախագծից եւ դրա էլեկտրոնային օրինակից բացի որեւէ այլ փաստաթուղթ

ներկայացնելու պահանջ:

4. Թույլտվությունը տրամադրվում է թույլտվության նախագիծը ներկայացնելու օրվանից՝ 3 աշխատանքային օրերի ընթացքում:

5. Թույլտվության գործողության ժամկետը սահմանափակվում է այն օրացուցային տարով, որում տրամադրվել է այն:

6. Չի թույլատրվում փոփոխություններ կատարել տրված թույլտվության մեջ:

7. Լիազոր մարմինը ձեակերպում է թույլտվության բնօրինակը, որը տրամադրվում է հայտատուին կամ այն ստանալու լիազորությունների գրավոր հավաստում ունեցող հայտատուի ներկայացուցչին: Նախքան ապրանքների մաքսային ձեակերպումը՝ հայտատուն թույլտվության բնօրինակը ներկայացնում է համապատասխան մաքսային մարմին, որը, թույլտվությունը հսկողության տակ վերցնելով, հայտատուին է տալիս դրա օրինակը՝ այն հսկողության տակ վերցնելու մասին մաքսային մարմնի կողմից կատարված նշումով:

8. Տրված թույլտվությունները չեն կարող վերաձեակերպվել այլ հայտատուների անունով:

9. Տրված թույլտվության կորստի դեպքում լիազոր մարմինը կարող է, 5 աշխատանքային օրերի ընթացքում, հայտատուի գրավոր դիմումի հիման վրա, տրամադրել բնօրինակի նման ձեակերպվող եւ «Կրկնօրինակ» նշագրում պարունակող թույլտվության կրկնօրինակը: Ընդ որում, դիմումի մեջ պետք է պարզաբանվեն թույլտվության կորստի պատճառներն ու հանգամանքները: Դիմումը ձեակերպվում է կամայական ձեով:

10. Այն ապրանքների մաքսային ձեակերպման դեպքում, որոնց արտահանման եւ (կամ) ներմուծման համար հսկողություն է սահմանվել, հայտատուն, մաքսային նպատակներով պահանջվող փաստաթղթերից բացի, մաքսային մարմիններ է ներկայացնում թույլտվության բնօրինակը:

Թույլտվության բացակայությունը հիմք է ծառայում մաքսային մարմինների կողմից ապրանքների մաքսային ձեակերպումը մերժելու համար:

Հոդված 5

Ընդհանուր դրույթներ

1. Հայտը քննարկելու, լիցենզիա տրամադրելու կամ լիցենզիայի առկայությունը հավաստող փաստաթուղթը վերաձեակերպելու համար, լիազոր մարմնի կողմից գանձվում է պետական տուրք(լիցենզավորման վճար)՝ Կողմ հանդիսացող պետության օրենսդրությամբ նախատեսված կարգով եւ չափով: Պետական տուրքի չափը պետք է համապատասխանի տրամադրվող ծառայությունների արժեքին:

2. Լիցենզիաները եւ թույլտվությունները տրամադրվում են Արտաքին տնտեսական գործունեության միասնական ապրանքային անվանացանկի համաձայն՝ դասակարգման ենթակա յուրաքանչյուր ապրանքի համար, որի նկատմամբ սահմանվել է լիցենզավորման կամ հսկողության պահանջ:

3. Լիցենզիաները եւ թույլտվությունները ստորագրելու իրավունքով օժտված լիազոր մարմինների պաշտոնատար անձանց ստորագրությունների նմուշները, ինչպես նաեւ լիազոր մարմինների կնիքների դրոշմների նմուշներն ուղարկվում են Հանձնաժողով՝ Կողմ հանդիսացող պետությունների մաքսային մարմիններին ծանուցելու համար:

4. Լիցենզիան կամ թույլտվությունը ձեակերպելու համար ներկայացված փաստաթղթերը, ինչպես նաեւ լիցենզիայի կատարումը հավաստող փաստաթղթերը պետք է պահվեն լիազոր մարմիններում լիցենզիայի կամ թույլտվության գործողության ժամկետի ավարտից հետո կամ՝ լիցենզիայի գործողությունը դադարեցնելու կամ կասեցնելու մասին որոշումն ընդունելու ամսաթվից՝ 3 տարվա ընթացքում:

Նշված ժամկետը լրանալու դեպքում, փաստաթղթերը ոչնչացվում են Կողմ հանդիսացող այն պետության օրենսդրությամբ սահմանված կարգով, որտեղ տրամադրվել են այդ լիցենզիաներն ու թույլտվությունները:

5. Լիազոր մարմինները վարում են տրամադրված լիցենզիաների եւ թույլտվությունների տվյալների բազան ու Հանձնաժողովի կողմից սահմանված կարգով եւ ժամկետներում նշված տեղեկությունները տրամադրում են Հանձնաժողովին: Հանձնաժողովը տրամադրված լիցենզիաների մասին տեղեկություններ է տրամադրում Կողմ հանդիսացող պետության մաքսային մարմիններին:

6. Երրորդ երկրների նկատմամբ ոչ սակագնային կարգավորման միասնական միջոցներ, ապրանքների արտաքին առևտրին վերաբերող եւ Կողմ հանդիսացող պետությունների ազգային շահերից ելնելով սահմանվող միջոցներ, ինչպես նաեւ ապրանքների արտաքին առևտրի համար արգելքների եւ սահմանափակումների հատուկ տեսակներ կիրառելու համապատասխան լիազորություններով Հանձնաժողովին օժտելու ամսաթվից՝ Հանձնաժողովին իրավունք է տրվում կատարելու սույն Համաձայնագրի թիվ 1 եւ թիվ 2 հավելվածներով նախատեսված փոփոխություններն ապրանքների առանձին տեսակների արտահանման եւ (կամ) ներմուծման լիցենզիայի ստացման մասին հայտի ձեւակերպման ու լիցենզիայի ձեւակերպման համար սահմանված հրահանգներում եւ ապրանքների առանձին տեսակների արտահանման եւ (կամ) ներմուծման թույլտվության նախագծի ձեւակերպման ու նման թույլտվության ձեւակերպման համար սահմանված հրահանգներում:

Հոդված 6

Վեճերի լուծումը

1. Կողմերի միջեւ սույն Համաձայնագրի մեկնաբանման եւ (կամ) կիրառման հետ կապված վեճերը լուծվում են բանակցությունների եւ խորհրդակցությունների անցկացման միջոցով:

2. Եթե Կողմերը խորհրդակցությունների ու բանակցությունների միջոցով չեն կարգավորում վեճը, Կողմերից մեկի կողմից մյուսին ուղղված պաշտոնական գրավոր խնդրանք ներկայացնելու ամսաթվից՝ 6 ամսվա ընթացքում, ապա, վեճի լուծման այլ միջոցի վերաբերյալ Կողմերի միջեւ որեւէ այլ պայմանավորվածության բացակայության դեպքում, Կողմերից յուրաքանչյուրն այդ վեճը հանձնում է Եվրասիական տնտեսական համայնքի դատարանի քննությանը:

Հոդված 7

Փոփոխությունները

Կողմերի համաձայնությամբ՝ սույն Համաձայնագրում կարող են կատարվել այնպիսի փոփոխություններ, որոնք ձեւակերպվում են առանձին արձանագրություններով:

Հոդված 8

Եզրափակիչ դրույթներ

Սույն Համաձայնագիրն ուժի մեջ մտնելու, դրան միանալու եւ դրանից դուրս գալու կարգը սահմանվում է 2007 թվականի հոկտեմբերի 6-ի «Մաքսային միության իրավապայմանագրային բազայի ձեւավորմանն ուղղված միջազգային պայմանագրերն ուժի մեջ մտնելու, դրանցից դուրս գալու եւ դրանց միանալու կարգի մասին» արձանագրությամբ:

Կատարված է Մոսկվա քաղաքում, 2009 թվականի հունիսի 9-ին, մեկ բնօրինակից, ռուսերենով:

Սույն Համաձայնագրի բնօրինակը պահպանվում է Հանձնաժողովում, որը, լինելով սույն Համաձայնագրի ավանդապահը, յուրաքանչյուր Կողմի կտրամադրի իր վավերացված օրինակը:

**«Ապրանքների արտաքին առևտրի ոլորտում
լիցենզավորման կանոնների մասին» Համաձայնագրի
թիվ 1 հավելված**

**ՀՐԱՀԱՆԳՆԵՐ՝ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԱՌԱՆՁԻՆ ՏԵՍԱԿՆԵՐԻ ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ԵՎ (ԿԱՄ)
ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՀԱՄԱՐ ԼԻՑԵՆԶԻԱ ՍՏԱՆԱԼՈՒ ՄԱՍԻՆ ՀԱՅՏԻ ՁԵՎԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ
ՆՄԱՆ ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ՁԵՎԱԿԵՐՊՄԱՆ ՀԱՄԱՐ**

(Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի հունիսի 22-ի թիվ 680 որոշման
խմբագրությամբ, Մաքսային միության հանձնաժողովի 2010 թվականի հունվարի 1-ի թիվ
168 որոշմամբ կատարված փոփոխություններով)

Ընդհանուր դրույթներ

1. Սույն հրահանգներով սահմանվում են ապրանքների առանձին տեսակների արտահանման եւ (կամ) ներմուծման համար լիցենզիա ստանալու մասին հայտի ձեւակերպման (այսուհետ, համապատասխանաբար՝ հայտ, լիցենզիա) եւ Կողմ հանդիսացող պետությունների գործադիր իշխանության պետական լիազոր մարմինների (այսուհետ՝ լիազոր մարմիններ) կողմից տրվող լիցենզիաների ձեւակերպման կարգը:

2. Ծածկագրերը նշելու համար առանձին վավերապայմաններում ծածկագրված տեղեկությունների ներմուծման համար կիրառվում են մաքսային ձեւակերպումների համար օգտագործվող նորմատիվ հղումներ հանդիսացող տեղեկությունների դասակարգիչներ (այսուհետ՝ դասակարգիչներ):

3. Սույն Հրահանգների 2-րդ կետում նշված տեղեկությունների ծածկագրերը պետք է տեղակայված լինեն վավերապայմանների դաշտի վերին աջ անկյունում, որի սահմաններն առանձնացված են «|» նշանով (ուղղահայաց գիծ):

Հայտի ձեակերպման կարգը

4. Հայտատուի կողմից հայտը ձեակերպվում է թղթային կրիչի վրա եւ լրացվում է տպող սարքի միջոցով՝ սույն Հրահանգների թիվ 1 հավելվածում նշված ձեւին համապատասխան:

5. Հայտի վավերապայմանները լրացվում են հետեւյալ կերպ.

1-ին վավերապայման «Հայտի համարը»

Հայտի համարը բաղկացած է 13 նիշից եւ ձեւավորվում է հետեւյալ կերպ.

1-ին եւ 2-րդ նիշեր՝ հայտը գրանցող՝ Մաքսային միության անդամ պետության ալֆա 2 ծածկագիրը (Բելառուսի Հանրապետություն՝ «BY», Ղազախստանի Հանրապետություն՝ «KZ», Ռուսաստանի Դաշնություն՝ «RU»),

3-րդ եւ 4-րդ նիշեր՝ տարեթվի վերջին երկու թվերը,

5-7-րդ նիշեր՝ հայտը գրանցող լիազոր մարմնի կնիքի համարը (ծածկագիրը),

8-13-րդ նիշեր՝ հայտի հերթական համարը, որը տրամադրվում է լիազոր մարմնի կողմից, հատուկ մատյանում հայտին աճման կարգով գրանցման վեցանիշ համար տալու միջոցով,

Վավերապայմանը լրացվում է հայտը գրանցող լիազոր մարմնի կողմից:

2-րդ վավերապայման «Գործողության ժամանակահատվածը»

Նշվում է հայտատուի կողմից պահանջվող՝ լիցենզիայի գործողության ժամանակահատվածը, որը ձեակերպվում է հետեւյալ կերպ.

00.ԱԱ.ՏՏՏՏ-ից մինչեւ 00.ԱԱ.ՏՏՏՏ,

որտեղ՝

00-ն՝ օրն է,

ԱԱ-ն՝ ամիսն է,

ՏՏՏՏ-ն՝ տարին է:

Նիշերը իրարից անջատվում են կետերով (օրինակ՝ 01.01.2008 թվականից մինչեւ

31.12.2008 թվականը)

Լիցենզիայի գործողության ժամանակահատվածի մեկնարկային ամսաթիվը չի կարող նշանակվել հայտատուի կողմից հայտի ստորագրման ամսաթվից՝ 3 ամսից ավելի ուշ:

(պարբերությունն ավելացվել է Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի հունիսի 22-ի թիվ 680 որոշմամբ),

3-րդ վավերապայման «Լիցենզիայի տիպը»

Լիցենզիայի հայցվող տիպի համար նշվում է լիցենզիայի տեսակը եւ ապրանքի տեղափոխման ուղղությունը, որտեղ՝

ա) լիցենզիայի տեսակը (վավերապայմանի ձախ կողմը).

գլխավոր՝ գլխավոր լիցենզիայի ձեւակերպման համար,

միանգամյա՝ միանգամյա լիցենզիայի ձեւակերպման համար,

բացառիկ՝ բացառիկ լիցենզիայի ձեւակերպման համար,

բ) ապրանքի տեղափոխման ուղղությունը (վավերապայմանի աջ կողմը).

արտահանում՝ արտահանման լիցենզիայի ձեւակերպման համար,

ներմուծում՝ ներմուծման լիցենզիայի ձեւակերպման համար,

Վավերապայմանի ձախ եւ աջ կողմերն իրարից անջատվում են «|» նշանով (ուղղահայաց գիծ),

4-րդ վավերապայման «Պայմանագիր»

Նշվում է պայմանագրի համարը, դրա ստորագրման ամսաթիվը:

Ամսաթիվը նշվում է սույն բաժնի 2-րդ վավերապայմանով նախատեսված պահանջներին համապատասխան:

գլխավոր եւ բացառիկ լիցենզիաների հայտի ձեւակերպման դեպքում 4-րդ վավերապայմանը չի լրացվում,

5-րդ վավերապայման «Հայտատու»

Նշվում են տեղեկություններ հայտատուի մասին.

իրավաբանական անձանց համար՝ լրիվ պաշտոնական անվանումը եւ

իրավաբանական հասցեն: Վերին աջ անկյունում նշվում է հարկ վճարողի հաշվառման համարը,

անհատ ձեռնարկատերերի եւ ֆիզիկական անձանց համար՝ ազգանունը, անունը, հայրանունն ու անձնագրային տվյալները (սերիան, համարը, երբ եւ ում կողմից է տրված, բնակության վայրը): Վերին աջ անկյունում նշվում է հարկ վճարողի նույնականացման համարը,

6-րդ վավերապայման

«Գնորդ»՝ արտահանման լիցենզիայի ձեւակերպման համար:

«Վաճառող»՝ ներմուծման լիցենզիայի ձեւակերպման համար:

Նշվում է այն պայմանագրի համաձայն հայտատուի կապալառու հանդիսացող օտարերկրացի գործընկերոջ (գործընկերոջ) լրիվ պաշտոնական անվանումը եւ լրիվ հասցեն, որով նախատեսվում է պայմանագրում նշված ապրանքի փոխանցման իրավունք՝ պայմանագրի լեզվի պահպանմամբ:

(Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի հունիսի 22-ի թիվ 680 որոշման խմբագրությամբ),

Ընդ որում, որպես գնորդ նշվում է հայտատուից ապրանքների նկատմամբ իրավունքներ ստացող օտարերկրացի գործընկերը (գործընկերը), իսկ որպես վաճառող՝ հայտատուին նման իրավունքներ փոխանցող օտարերկրացի գործընկերը:

(Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի հունիսի 22-ի թիվ 680 որոշման խմբագրությամբ)

Գլխավոր եւ բացառիկ լիցենզիաների ձեւակերպման դեպքում կատարվում է «Պայմանագրի (պայմանագրերի) պայմաններին համապատասխան» գրառումը,

7-րդ վավերապայման

«Նշանակման երկիր»՝ արտահանման լիցենզիայի ձեւակերպման համար:

«Ուղարկող երկիր»՝ ներմուծման լիցենզիայի ձեւակերպման համար:

«Աշխարհի երկրներ եւ տարածքներ» դասակարգչի համաձայն՝ նշվում են նշանակման երկրները (արտահանման դեպքում) կամ ուղարկող երկրները (ներմուծման դեպքում) եւ երկրի ալֆա 2 ծածկագիրը:

Այն դեպքում, երբ պայմանագրով նախատեսվում է մի քանի նշանակման (ուղարկող) երկիր, կատարվում է «Պայմանագրի (պայմանագրերի) պայմաններին համապատասխան» գրառումը եւ չի նշվում երկրի ալֆա 2 ծածկագիրը: Այն դեպքում, երբ այդ մի քանի երկիրը դասվում է Եվրոպական միության երկրների շարքին, կատարվում է գրառում՝ «ԵՄ երկրներ» եւ չի նշվում երկրի ալֆա 2 ծածկագիրը:

(Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի հունիսի 22-ի թիվ 680 որոշման խմբագրությամբ)

Գլխավոր եւ բացառիկ լիցենզիաների ձեւակերպման դեպքում, կամ այն դեպքում, երբ հայտատուն տեղեկություններ չունի ապրանքներն ուղարկող երկրի (երկրների) մասին, վավերապայմանը չի լրացվում,

(պարբերությունն ավելացվել է Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի հունիսի 22-ի թիվ 680 որոշմամբ),

8-րդ վավերապայման

«Գնորդի երկիր»՝ արտահանման լիցենզիայի ձեւակերպման համար:

«Վաճառողի երկիր»՝ ներմուծման լիցենզիայի ձեւակերպման համար:

«Աշխարհի երկրներ եւ տարածքներ» դասակարգչի համաձայն՝ նշվում են գնորդի (վաճառողի) երկրի անվանումը եւ երկրի ալֆա 2 ծածկագիրը:

Գլխավոր եւ բացառիկ լիցենզիաների ձեւակերպման դեպքում կատարվում է «Պայմանագրի (պայմանագրերի) պայմաններին համապատասխան» գրառումը եւ չի նշվում երկրի ալֆա 2 ծածկագիրը:

9-րդ վավերապայման «Պայմանագրի արժույթ»

«Աշխարհի արժույթներ» դասակարգչի համաձայն՝ նշվում է պայմանագրի արժույթի անվանումը եւ դրա ծածկագիրը:

Գլխավոր կամ բացառիկ լիցենզիայի ձեւակերպման դեպքում կատարվում է գրառում՝ «Պայմանագրի (պայմանագրերի) պայմաններին համապատասխան», եւ չի նշվում արժույթի ծածկագիրը:

10-րդ վավերապայման «Արժեք»

Նշվում է ապրանքի արժեքը պայմանագրի արժույթով:

Եթե արժեքը ներառում է տասնորդական միավորներ, ապա այն կլորացվում է մինչև ամբողջ թիվը՝ կլորացման կանոնների համաձայն:

Գլխավոր եւ բացառիկ լիցենզիաների ձեւակերպման դեպքում արժեքը չի նշվում.

Եթե պայմանագրում եւ դրա հավելվածներում (լրացումներում) բացակայում են տեղեկություններ, որոնք թույլ են տալիս հայտում նշել լիցենզավորման ենթակա ապրանքների արժեքի ճշգրիտ մեծությունը, ապա նշվում է ապրանքների մոտավոր արժեքը.

(պարբերությունն ավելացվել է Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի հունիսի 22-ի թիվ 680 որոշմամբ),

11-րդ վավերապայման «Վիճակագրական արժեք»

Նշվում է ապրանքի արժեքը ԱՄՆ դոլարով՝ պայմանագրին համապատասխան:

ԱՄՆ դոլարից բացի այլ արժույթով արտահայտված ապրանքի արժեքի վերահաշվարկը ԱՄՆ դոլարին կատարվում է արժույթի պարիտետին (անվանական արժեքին) համապատասխան (պայմանագրում նշված արժույթի արժեքային հարաբերակցությունը ԱՄՆ դոլարի հետ՝ Կողմի ազգային բանկի կողմից պայմանագրի ստորագրման օրվա համար սահմանված փոխարժեքով):

Եթե արժեքը ներառում է տասնորդական միավորներ, ապա այն կլորացվում է մինչև ամբողջ թիվը՝ կլորացման կանոնների համաձայն:

Գլխավոր եւ բացառիկ լիցենզիաների համար, ինչպես նաեւ այն դեպքում, երբ պայմանագրում եւ դրա հավելվածներում (լրացումներում) բացակայում են տեղեկություններ, որոնք թույլ են տալիս հայտում նշել լիցենզավորման ենթակա ապրանքների արժեքի ճշգրիտ մեծությունը, ապա նշվում է վիճակագրական արժեքի մոտավոր մեծությունը: Ընդ որում, «Լրացուցիչ տեղեկություններ» 16-րդ վավերապայմանում կատարվում է գրառում հետեւյալ բովանդակությամբ՝ «Արժեքը եւ վիճակագրական արժեքը նշված են մոտավորապես»,

(Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի հունիսի 22-ի թիվ 680 որոշման խմբագրությամբ)

12-րդ վավերապայման «Ծագման երկիր»

«Աշխարհի երկրներ եւ տարածքներ» դասակարգչի համաձայն՝ նշվում են ծագման

երկրի անվանումը եւ երկրի ալֆա 2 ծածկագիրը:

Այն դեպքում, երբ պայմանագրով նախատեսվում է մի քանի ծագման երկիր, կատարվում է «Պայմանագրի (պայմանագրերի) պայմաններին համապատասխան» գրառումը եւ չի նշվում երկրի ալֆա 2 ծածկագիրը: Այն դեպքում, երբ այդ մի քանի երկիրը դասվում է Եվրոպական միության երկրների շարքին, կատարվում է «ԵՄ երկրներ» գրառումը եւ չի նշվում երկրի ալֆա 2 ծածկագիրը:

(Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի հունիսի 22-ի թիվ 680 որոշման խմբագրությամբ)

Գլխավոր կամ բացառիկ լիցենզիաների ձեւակերպման դեպքում, երբ հայտատուն տեղեկություններ չունի ապրանքների ծագման երկրի մասին, կատարվում է «Պայմանագրի (պայմանագրերի) պայմաններին համապատասխան» գրառումը եւ չի նշվում երկրի ալֆա 2 ծածկագիրը:

(պարբերությունն ավելացվել է Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի հունիսի 22-ի թիվ 680 որոշմամբ),

«Ծագման երկիր» ասելով ենթադրվում է այն երկիրը, որտեղ ապրանքն արտադրվել է ամբողջությամբ կամ ենթարկվել է բավարար լրացուցիչ մշակման (վերամշակման),

13-րդ վավերապայման «Քանակ»

Նշվում է ապրանքի քանակը՝ 14-րդ վավերապայմանով նախատեսված չափման միավորով (կշռի միավորների համար՝ նետոտո քաշը):

«Նետոտո քաշ» ասելով ենթադրվում է ապրանքի քաշն առանց փաթեթավորման, որը սահմանվում է ստանդարտացման տեխնիկական կանոնակարգերի եւ (կամ) նորմատիվ փաստաթղթերի ու օրենսդրական մյուս ակտերին համապատասխան,

14-րդ վավերապայման «Չափման միավոր»

Վավերապայմանում կարող է տող առ տող նշվել չափման մինչեւ 2 միավոր: Առաջին տողում նշվում է ապրանքի չափման միավորի կրճատ անվանումը (հիմնական կամ լրացուցիչ)՝ Մաքսային միության Արտաքին տնտեսական գործունեության միասնական ապրանքային անվանացանկին (ՄՄ ԱՏԳ ՄԱԱ) համապատասխան: Երկրորդ տողը լրացվում է անհրաժեշտության դեպքում՝ «Չափման միավորներ» դասակարգչի համաձայն: 2 չափման միավոր նշելու դեպքում ապրանքի քանակը 13-րդ վավերապայմանում նշվում է

տող առ տող,

(Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի հունիսի 22-ի թիվ 680 որոշման խմբագրությամբ)

15-րդ վավերապայման «Ապրանքի ծածկագիրը՝ ըստ ԱՏԳ ՄԱԱ-ի եւ դրա նկարագրությունը»

Նշվում է ապրանքի նկարագրությունը եւ դրա ծածկագիրը՝ ԱՏԳ ՄԱԱ-ի համաձայն: Ապրանքի նկարագրության միջոցով պետք է հնարավոր լինի ապրանքը նույնականացնել ԱՏԳ ՄԱԱ-ի 10-անիշ դասակարգման ծածկագրերից որեւէ մեկի հետ: Ապրանքի նկարագրության մեջ պետք է նշվի դրա անվանումը (առեւտրային, կոմերցիոն կամ որեւէ այլ ավանդական անվանում).

Այն դեպքում, երբ ամբողջ տեղեկությունը չի տեղավորվում 15-րդ վավերապայմանի դաշտում, դրա մի մասը կարող է տեղափոխվել 16-րդ վավերապայմանի դաշտ:

Եթե հայտին կից ներկայացվում է հավելված սույն հրահանգների 2-րդ հավելվածում նշված ձեւի համաձայն, ապա 15-րդ վավերապայմանի դաշտում նշվում է ապրանքի նկարագրությունը, որի միջոցով հնարավոր է ապրանքը նույնականացնել ԱՏԳ ՄԱԱ-ի 10-անիշ դասակարգման ծածկագրերից որեւէ մեկի հետ, նաեւ կատարվում է «տես հավելվածը... թերթերի վրա» գրառումը:

16-րդ վավերապայման «Լրացուցիչ տեղեկություններ»

Օգտագործվում է ըստ անհրաժեշտության: Այս վավերապայմանի դաշտում կարող են լրացվել հայտի 7-րդ, 8-րդ, 10-րդ., 11-րդ, 12-րդ, 13-րդ, 14-րդ եւ 15-րդ վավերապայմանները ճշգրտելու եւ մեկնաբանելու անհրաժեշտությամբ պայմանավորված նշվող տեղեկություններ, հայտի ձեւակերպման օրը ստորագրված պայմանագրում կատարված փոփոխությունների համարները եւ ամսաթվերը, ինչպես նաեւ հայտատուի ու արտադրողի կամ ապրանքը սպառողի միջեւ կնքված պայմանագրերի համարները եւ ամսաթվերը, եթե որպես հայտատու հանդես է գալիս միջնորդը:

(Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի հունիսի 22-ի թիվ 680 որոշման խմբագրությամբ)

17-րդ վավերապայման «Լիցենզիայի տրամադրման հիմքը»

Նշվում են.

Հանձնաժողովի որոշումների համարները եւ ամսաթվերը, Կողմի կամ միջազգային լիազոր մարմինների նորմատիվ իրավական ակտերի համարները եւ ամսաթվերը, որոնք հիմք են ծառայել լիցենզիայի տրամադրման համար (նման որոշումների ընդունման դեպքում),

հայտատուի եւ արտադրողի կամ ապրանքը սպառողների միջեւ կնքված պայմանագրերի համարները եւ ամսաթվերը, եթե որպես հայտատու հանդես է գալիս միջնորդը,

քվոտայի հատկացումը հաստատող փաստաթղթի համարը եւ ամսաթիվը (քվոտայով սահմանափակման ենթակա ապրանքների համար լիցենզիայի ձեւակերպման դեպքում),

Լիցենզիայի տրամադրումը հիմնավորող այլ անհրաժեշտ տեղեկություններ,

